

Բժշկական էթիկայի սկզբունքներ՝ վատ լուր հաղորդելու

Ընտանեկան Բժշկության Միջազգային
4-րդ Գիտաժողով, 7-8 Հոկտեմբեր 2016

Մերի Զորպահեան
MBCbB MRCGP DPD, GP Partner Lakeside Healthcare



ՌՐՆ Է ՎԱՄ ԼՈՒՐԸ

- Անհատի՝ սեփական ապագայի վերաբերյալ պատկերացումներին հակասող կամ դրանց վրա լրջորեն ազդող ցանկացած տեղեկատվություն
- Հայտնվող տեղեկատվության «վատը» լինելը կախված է անհատի ընկալումից:

Իրավիճակ 1

- 35-տարեկան կին
- Վերջին 2 տարիների ընթացքում հղիանալու բոլոր փորձերն անհաջող են եղել
- Դաշտանն անկանոն է դարձել, իսկ վերջին դաշտանը եղել է 8 ամիս առաջ
- FSH (ֆոլիկուլոլոխաթանիչ հորմոն) երկու լաբորատոր քննությունների ցուցանիշներն էլ > 40
- Նրա մոտ դիտվում է ձվարանների ֆունկցիայի վաղաժամ անկում/ վաղ դաշտանադադար
- Ձեզ է դիմում պարզելու երեխա ունենալու իր հնարավորությունները:

ԴՌԼՔ Ի՞Նչ ԿԱՍԵՔ

1. «Մենք չենք կարող մեկնաբանել հետազոտությունների տվյալները և նա կարիք ունի մասնագիտական խորհրդատվության»:
2. «Հետազոտությունների տվյալները որոշակի հիվանդության մասին չեն վկայում և նա պետք է հույսը չկորցնի և շարունակի փորձել հղիանալ»:
3. «Նրա մոտ արդեն դաշտանադադար է և բնական ճանապարհով բեղմնավորումն անհնար է»:

Իրավիճակ 2

- 70 տարեկան կին այցելում է ձեզ՝ ոտքին առաջացած խոցային վերքի կապակցությամբ և ասում է, որ ամենից շատ վախենում է, որ կարող է դիաբետ ունենալ:
- Արյան լաբորատոր քննությունը հաստատում է 2րդ տիպի դիաբետի ախտորոշումը

Արդյո՞ք Դուք...

1. Կբուժեք խոցային վերքը որպես առանձին խնդիր, առանց ասելու դիաբետի առկայության մասին, այնուամենայնիվ նշանակելով դիաբետի բուժման դեղամիջոցներ:
2. Կպարզաբանեք դիաբետից վախի պատճառները և բացատրեք, որ նույնիսկ հիվանդության առկայության դեպքում առկա են նոր հնարավորություններ, որոնք դիաբետը բուժելի են դարձնում:
3. Կասեք նրան, որ ինքը դիաբետ ունի:
4. Ընտանիքի անդամներին կհանձնարարեք սննդակարգի փոփոխություններ իրականացնեն, առանց դիաբետի մասին հիվանդին տեղեկացնելու:

Իրավիճակ 3

- 55 տ. Տղամարդ, թոքի քաղցկեղի ախտորոշումով, այցելում է ձեզ և նամակ է բերում օնկոլոգից: Գլխացավերի և փսխումների պատճառով վերջերս հետազոտվել է և հայտնաբերվել են մետաստազներ ոսկրերում և ուղեղում: Ձեզ հարցնում է, թե դա ինչ է նշանակում:
- Նրա ընտանիքի անդամները ձեզ նախազգուշացրել էին և խնդրել գաղտնի պահել հիվանդից, քանի որ այդ լուրը կդատարկի նրա ներաշխարհը ու նա չի ապրի:

Արդյո՞ք Դուք ...

1. Հիվանդի համար կմեկնաբանեք հետազոտությունների արդյունքները և բացատրեք, որ բուժումը միայն պալիատիվ է լինելու:
2. Կասեք նրան, որ մեկնաբանությունների համար նորից օնկոլոգին դիմի:
3. Կնշանակեք ցավազրկող միջոցներ ու ասեք, որ գլխացավերի համար այցելի ակնաբույժի:
4. Կընդունեք ընտանիքի անդամների հորդորները, քանի որ նրանք ավելի լավ են ճանաչում հիվանդին:

Այսպիսով իրականում հարցերը հետևյալն են.

1. Իրականում ի՞նչ են ուզում իմանալ հիվանդները
2. Ո՞րն է բժշկի դերը այդ գիտելիքի տրամադրման հարցում
3. Ո՞րոնք են արդյունավետ հաղորդակցության խոչընդոտները
4. Ինչպե՞ս կարելի է դրանք հաղթահարել
 - i. Ի օգուտ պացիենտին (հիվանդին)
 - ii. Բժշկի՝ սեփական աշխատանքից գոհունակության բարելավման նկատառումով:

Ինչ են ապացույցները վատ լուրը հաղորդելու ընդացքին

- Ախտորոշման, բուժման մեթոդների և կանխատեսման վերաբերյալ հշմարտությունն իմանալու հիվանդների ցանկությունն ավելի մեծ է, քան բժիշկներն են կարծում:
- Գիտական հետազոտությունների տվյալները ցույց են տալիս, որ այդ փաստերը վերաբերում են ոչ միայն արևմտյան երկրներին, այլ նաև միջերկրական և արևելյան երկրներին:
- Հիվանդները վստահ են, որ հենց իրենք պետք է ամբողջապես տեղեկացված լինեն իրենց առողջական վիճակի մասին:
- Նրանք հաճախ կամենում են, որ ընտանիքի անդամները ներգրավված լինեն:
- Հիվանդին ուսեալ լինելը մեծ դեր ունի իր հասկացողության մեջ և ավելի կը փափաքին գիտնալ:

Վատ լուր հայտնելու տարբերակներ

- Հիվանդները տարբեր նախասիրություններ ունին վատ լուր ստանալուն մեջ
 - Ամբողջ տեղեկատվության որ մասն է ասվում
 - Երբ է ասվում
 - Ուր է տեղի ունենում խորհրդատվությունը
 - Ինչ բառեր են օգտագործվում
 - Ընտանիքի որ անդամներն են ներգրաված

Ճշմարտությունն իմանալու օգուտները

- Բարելավում է բուժման մեթոդի ընտրության որոշումների կայացման գործընթացը
- Նվազեցնում է տագնապը և բարելավում փոփոխությունների հարմարեցումը
- Բարելավում է ախտանշանների վերահսկումը
- Ապահովում հիվանդի և ընտանիքի անդամների էմոցիոնալ և գործնական պատրաստվածությունը
- Բարելավում բժշկի և հիվանդի հաղորդակցությունը և փոխադարձ վստահությունը

Հիշեք՝

- «Ոչ մի լուր չհաղորդելը լավ լուր չի, այլ ընդամենը վախերի պատճառ»:
- «Հույսը հիմնվում է իմացության վրա, այլ ոչ թե անտեղյակության»:
- «Ճշմարտությունը ցավ է պատճառում, բայց սուտն ավելի մեծ ցավ է պատճառում»:

Վատ լուր հայտնելու դժվարությունները

- Բժիշկները չեն կարող իմանալ հիվանդության ընթացքը և անհատական ճշգրիտ կանխատեսում ապահովել:
- Մենք չենք սիրում տրամադրել տեղեկատվություն, որը սթրեսի է ենթարկում և վախենում ենք անհատի ռեակցիայից:
- Բժշկության արվեստի բավարար ուսուցում չենք ստացել:
- Արդեն իսկ բարդ աշխատանքին սթրեսային գործոն է ավելանում, որը պահանջում է մտքի համապատասխան ձևակերպում, համապատասխան տեղի և պահի ընտրություն:
- Բժշկի համար զգացմունքների լրացուցիչ արտահոսք է և կարող է չստանանք բավարար աջակցություն, հատկապես եթե հույսերը չեն արդարանում:
- Մեկուսացման զգացում կարող ենք ունենալ, եթե մյուսները պատրաստ չեն ճշմարտությունն ասելու
- Մեր վրա կարող են ազդել մեր նախապաշարումների ու նախկինում ունեցած դեպքերի փորձի բեռը:

Որո՞նք են էթիկայի և օրենքի պահանջները

Կենսաբժշկական էթիկայի սկզբունքներ– Beauchamp և Childress

- Ինքնավարություն. որոշումներ կայացնելու անհատի իրավունքը
- Օգտակարություն. գործել ի օգուտ հիվանդին
- Զփնասելը. մի՛ վնասիր
- Արդարություն. Անխտրականություն և հավասարություն համայնքի մեջ, տարբերություն ուզելու և կարիքի միջև

- Պետք է գործել որոշակի երկրի օրենքների շրջանակներում:
- Պետք է գործել որոշակի երկրում ընդունված մասնագիտական գործունեության նկարագրի շրջանակներում. օրինակ Հիպոկրատի երդման տարբերակ, Անգլիայում՝ Գլխավոր Բժշկական խորհրդի կողմից սահմանված բժշկի պարտականություններին համապատասխան:
- Այն ներառում է.
 - Բուժման լավագույն չափորոշիչներին համապատասխանություն
 - Պացիենտի և այլ բժշկական մասնագիտությունների ներկայացուցիչների հետ հաղորդակցության լիարժեքություն
 - Բժշկական գաղտնիքի պահպանում
 - Հավաստիացում բուժման համաձայնության ստանալու հարցում
 - Պացիենտի բուժման ընթացքում նրա արժանապատվության պահպանման հավաստիացում

Ինչպե՞ս հասնել այդ բոլորին



Consultation models in breaking bad news

Հնդհանուր բժշկություն

- Նեյիպըր-ին (Neighbour) 5 փուլերով մոդել
- Քեմբրիջ Քալգարի մոդել – համապարփակ և մանրամասն

Օնկոլոգիա և պալիատիվ խնամք

- SPIKES 6 քայլով ընթացակարգ
- BREAKS ընթացակարգ

Framework for breaking bad news

Նեյիպըր-ին
(Neighbour) 5 փուլերով
մոդել

(ձեռք)



- Կապ հաստատել
- Ամփոփել
- Հանձնել
- Անվտանգուիթյան ցանց դնել
- Հոգատարուիթյուն

Կապ հաստատել

- Ճիշտ պահի ընտրություն
- Համապատասխան միջավայր, վստահ լինել, որ չեն ընդհատի, հարգել պացիենտի առանձնանալու և գաղտնիքի պահպանման իրավունքը, արդյոք կան աջակիցներ:
- Նախապատրաստում- վստահ եղեք, որ ձեռքի տակ ունեք անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը
- Պատշաճ կերպով ներկայացեք
- Պատշաճ հաղորդակցություն հաստատեք
- Պարզեք, թե ինչ է իրեն արդեն հայտնի
- Պացիենտի մտքերը, անհանգստությունները և ակնկալիքները:

Ամփոփում

- Խորհրդատվության ընթացքում հիվանդից ստացած տեղեկատվությունն ամփոփեք և ետ հաղորդեք հիվանդին
- Թույլ տվեք, որ հիվանդը պարզաբանի, եթե անհրաժեշտություն կա:

Հանձնել



- Կարող է « նախազգուշական կրակոցի» կարիք լինի
- Տեղեկատվություն տրամադրեք պացիենտի համար հասկանալի բառերով
- Եղեք ազնիվ, բարի, զգայուն, մի գերազանցեք տեղեկատվության տանելիության պացիենտի հնարավորությունները
- Դադարի հնարավորություններ տվեք
- Ընթացքում ստուգեք՝ արդյոք հիվանդը ընկալում է տեղեկատվությունը
- Հարգեք նրա ինքնուրույնությունը. տեղեկատվության տրամադրումը խրախուսում է անհատի կողմից իրավիճակի տիրապետմանն ու իրեն համար ճիշտ որոշման կայացնելը:


Անվտանգ ության ցանց

- Ստուգեք ինչքանով է հասկացել
- Տվեք զգացմունքներն արտահայտելու հնարավորություն.

➤ Ժխտողականություն

➤ Զայրույթ

➤ Վիշտ



- Եղեք կարեկից պրոֆեսիոնալ
- Ստուգեք արդյոք հարցեր ունի
- Կազմեք ծրագիր հետեվանքներու մասին. հետո ինչ տեղի կունենա, ում պիտի դիմեն, եթե օգնության կարիք լինի, վստահ եղեք, որ բուժման պլանին հետևելն իրատեսական է, խորհրդատվությունը եզրափակեք դրական տրամադրությամբ:

Հոգատարություն



- Նկատի ունցեք ձեր սեփական զգացմունքներն ու դժվարությունները:
- Մի հուսալքվեք, եթե ամեն ինչ ընթանում է ձեր պլանավորածին ոչ համահունչ և դուք ձեզ զգում եք ինչպես լքված ճանապարհին:
- Սովորեք սեփական փորձառությունից. ինչն էր լավ և ինչը հետագայում շտկման կարիք ունի:
- Ձեզ և ձեր գործընկերների համար բավարար աջակցություն ապահովեք:
- Քայլեր նախաձեռնեք՝ խուսափելու մասնագիտական հյուժումից, լավ խնամք ապահովեք ինքներդ ձեզ համար:
- Համապատասխան սահմաններ դրեք ձեր ներգրավածության:

Եզրափակիչ կետեր



- Մտածեք, թե ինչպես կարող եք ուղեկցել անձին հիվանդուիթյան հաղթահարման իր ճանապարհին. դուք չեք կարող փոխել ճանապարհը, բայց կարող եք ողողափոսերը լցնել՝ հարթեցնելու ընթացքը:
- «Վատ լուր հաղորդելու վարպետը նա չէ, ով ամեն անգամ ճիշտ է գործում, այլ նա, ով ոչ այնքան հաճախ է սխալվում և ավելի քիչ է շփոթվում, երբ ամեն ինչ հարթ չի ընթանում» :

- Հոսանքին հակառակ լողալն ավելի ճիշտ է ստացվում, երբ մտքում նպատակ ունեն



Շնորհակալություն